ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

Մասնակցային բյուջետավորման շրջանակում հաղթող ծրագրերի իրականացման վերաբերյալ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված հայտերին համաձայնություն ստանալուց հետո՝ <<Մարզադաշտի բարեկարգում>> և <<Խաղահրապարակների կառուցում>> ծրագրերի համար հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթ, որին սակայն մասնակից չի եղել: Հայտարարվել է կրկնակի մրցույթ, որի արդյունքում ձեռք են բերվել նախագծանախահաշվային բոլոր փաստաթղթերը և այդ փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունները:

Բոլոր փաստաթղթերը սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ուղարկվել են լիազոր մարմին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հանձնարարական ստանալուն պես կսկսվի շինարարական աշխատանքների կատարման գնման մրցույթի ընթացակարգը:

11 հուլիսի 2025թ.